

ԾԽՈՂԸ ԳԻՏԷ ՀԱՍԸ

ԱՆԻ ՊԱՊԻՐՕՒՆԵՐԻ

10 հատը 6 կօպ.
25 հատը 15 կօպ.

Ակց. Ընկ. «ՄԻՐ» գործարանի:

(օ. մ.) առ. 738. 10-5

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

փոխղղից «Փետրվարի 19-ի փողոցը»
(Նախկին Պէտկովսկայա) № 30.

Վերադարձական հրատարակումներ
ՄԱՍՆԵՐՈՐԸՊՅՆ րժշկում նորագոյն ձևով սեռամի-
զային գործարանների (ստր և բրոնխիական ասուանա-
կի), միզափամփռային ջարբի՝ առանց վիրահատու-
թեան (փրշիով), սեռական գործարանների անկարու-
թեան (импотенция) և այլն, սիֆիլիսի 606 և 914-ով
Թորակարի բժշկում և վիրաբուժական մի-
ջոցով (արճնատական օդայանջամարանթ—
искусств. пневмоторакст) Forlanini, Brauer
և այլոց ձևով:

Ընդունելութեան ժամերը առ. մ. 12—1-ը, եր. 5—7-ը
(ա.օ.) առ. 761. 100—3

ՀՈՅԱԿԱՊ ՅՕՐԵԼԵԱՆՆԵՐ

Հայ ցիզի պատմութեան ամենախո-
շար և ամենահայապապ գործերից մէկն
է հայկական գրերի գիտութիւնը:

Նա հայ մտքի վերածնութեան ամե-
նամեծ ազդակներից և հայկական կուլ-
տուրայի ամենահիմնական տարրերից
մէկն է:

Հայ գրերի գիւտով հայութիւնը ա-
մենաամուր կամուրջ ձգեց իր և Արև-
մուտքի միջև, բարոյական կապ հաս-
տատեց մտածող մարդկութեան գա-
ղափարների և արամադրութիւնների
հետ:

Այդ լուսաւոտմանը պիտով հայու-
թեան համար ժողովրդական դարձան
մի շարք թարմացնող և ազնուացնող
բարոյական և հասարակագիտական գա-
ղափարներ, որոնք առաջ միայն բա-
ցառիկ անձնաւորութիւնների մենավա-
ճառութիւնն էին կազմում:

Տարեքի յարմարութեամբ սրբ-
բազործից հայ լեզուի իրաւունքը թէ

մատենագրութեան և պաշտօնագրու-
թիւնների մէջ և թէ դպրոցական կըր-
թութեան ասպարէզում ու ազգային
հաստատմանի փոխադարձ յարաբերու-
թիւնների մէջ:

Մտքի, փիլիսոփայութեան, գաղա-
փարների հասանքը, որ գրերի միջոցով
մտաւ յունական, ասորական և ապա
եւրօպական մտաւոր աշխարհներից, չը
թողցեց, որ իսպառ մարի հայութեան
մէջ գիտակցութեան լոյսը, գաղափա-
րականի հուրը:

Անցան դարեր, մեռան մարդիկ,
բայց մատենագրութիւնը թողցեց մեզ
համար աւանդութիւններ նախնի գոր-
ծողների և նրանց տեղիների մասին:

Տառադանքի և սարսափի դարերում
անկարելի էր շատ բան զարգացնել հայ
մատենագրութեան ասպարէզում. բայց
այն, ինչ կարողացաւ դիմանալ և մը-
նալ, տպացոյց է մարդկային հոգու
անընդճեղիութեան և յաւիտենական
յոյսերի գորութեան:

Հայութիւնը գրկաբաց կերպով իւ-
րացրեց և մի ուրիշ կարեսը գիւտ-
ութեան տպագրութեան ներմուծումն էր
հայ դպրութեան մէջ: Տպագրութիւնը,
որ մեր ժամանակի ամենազօրաւոր
գործօններից մէկն է նորագոյն մարդ-
կութեան հասարակական կեանքում,
մուտք գործեց մեր իրականութեան
մէջ չորս դար առաջ և սկիզբը գրեց
հայ տպագրական գործին մեզանում:

Ողջունելով երկու յօրելեանները,
մենք մի ջերմ իրօք և անձկալի փափագ
ունենք, որ գրերի գիւտին և տպագ-
րութեանը վերաբանված խոշոր վերա-
նորոգիչ գորութիւնը տայ հայութեան
այն արգասաւոր արդիւնքները, որոն-
ցով այնքան ճոխ է, բարգաւաճ և հը-
գօր ներկայ դարի լուսաւոր մարդկու-
թիւնը:

Ա. Բալանթար
**ՀԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՆՐՈՒԹԵԱՆ ՄԵԾ
ՏՈՒՆ՝**

Այսօր, 1500 երկար և ձիգ տարիներ
են անցնում այն թւականից, երբ հա-